

## ՆԱՐԵԿԱՅՈՒ ԱՌԵՂԾՎԱԾՆ

### Գ. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆ

Ничто великое в мире  
не совершалось без страсти...

Гегель

Անցած հազար տարում Գրիգոր Նարեկացու կյանքի, գործունեության և գրական ժառանգության մասին թեև ստեղծվել է պատկանելի գրականություն<sup>1</sup>, սակայն հայ գրական մեծագույն հանճարի կյանքի շատ էջեր ցարդ մնում են անհայտ ու մութ: Արձանագրելով այդ իրողությունը՝ վաստակաշատ նարեկացիագետ Պ. Խաչատրյանը եզրակացնում է, որ «Նարեկացու կյանքի ու գործի մասին գրողները հիմնականում նույն նյութն են տարտղնում, նույն տեղեկությունների շուրջ ծավալում իրենց ասելիքը, և դա բնական է, քանի որ միջնադարի հայ մեծ բանաստեղծի արտագրական կյանքը պատկանում է անհայտության տնօրինությանը, վարագուրված է արտաքին աչքից, փակ՝ պատմության ընթացքի եռուզեռից, ինչպես աղոթանվեր մենակյացն՝ իր ճգնարանում: Նման պարագայում միակ հուսալի ու անկեղծ աղբյուրը մնում են նրա հիշատակարանները»<sup>2</sup>: Միանգամայն համաձայն լինելով ասվածին՝ կցանկանայի սվելացնել, որ Նարեկացու ամենակարևոր «հիշատակարանը» ես համարում եմ նրա «Մատյան ողբերգութեան» հանճարեղ ստեղծագործությունը:

20-րդ դարի ռուս պահանավոր բանաստեղծուհի Մարինա Ծվետսևան, մի առիթով բանաստեղծներին բաժանելով պատմություն ունեցողների և չունեցողների, առաջինների մասին ասում է, որ «նրանք չափազանց մեծ են իրենց ծավալով ու թափով, նրանք նեղվում են իրենց «Եսի» մեջ՝ նույնիսկ ամենամեծի մեջ. նրանք այնպես են ընդլայնում այդ «Եսը», որ նրանից ոչինչ չեն թողնում, այն պարզապես ձուլվում է հորիզոնի եզրագծի հետ»<sup>3</sup>: Իբրև «պատմություն ունեցող բանաստեղծ»՝ Նարեկացին իր «Եսը» Մատյանում թեև ձուլել է անտեսանելի հորիզոն-Աստծու հետ, բայց և այնպես թողել է իր ճախրանքի հետքը, որը մեզ հնարավորություն է տալիս թափանցելու բանաստեղծի ներաշխարհը: Չէ՞ որ հենց դա է գրականության պատմության բուն խնդիրը: Երիցս իրավացի էր սփյուռքահայ մեծանուն գրող ու գրականության պատմաբան Հակոբ Օշականը, երբ գրում էր. «Ազգային պատմությունը մարդերը արժևորելու ատեն իր ուրը կը կեդրոնացնե մարդոց արդիւնքին: Գրականութեան պատմութիւնը, մարդոց արդիւնքը արժևորելու ատեն մեծ չափով կարօտ է մարդոց ներքին փաստերուն»<sup>4</sup> (ընդգծ. իմն է - Հ. Մ.):

Գրիգոր Նարեկացու մատենագրական հարուստ ժառանգության մանրագին ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ հանճարեղ բանաստեղծը

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Եր., 1996:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 16:

<sup>3</sup> Марина Цветаева. Поэты с историей и поэты без истории. В кн.: Марина Цветаева. Собр. соч., в 7-и томах, т. 5, М., 1994, с. 400.

<sup>4</sup> Յ. Օշական, Համապատկեր արևմտահայ գրականութեան, Բ. IV, Երուսաղէմ, 1956, էջ 215:

իր հրաշակերտ Մատյանն ստեղծելով դառն ճակատագրի պարտադրանքով, վերհիշել է իր կյանքի բազմաթիվ մանրամասներ, սակայն ստիպված է եղել տարբեր միջոցներով ծածկագրելու դրանք: Հարկավ, այդ նպատակին լավագույնս ծառայեցրել է լեզուն<sup>5</sup>, բայց նույն չափով, գուցե և ավելի, օգտագործել է նաև մտածական միջոցները: Բացառիկ վարպետությամբ օգտվելով թե՛ մեկի և թե՛ մյուսի ընձեռած անսպառ հնարավորություններից՝ բանաստեղծը կարողացել է ծածկագրել ոչ միայն պատմական դեպքերը, դեմքերը, փաստերն ու իրադարձությունները, այլև մարդկային հարաբերությունները, վարքն ու բարքը, բնավորություններն ու սովորությունները, գործողություններն ու գործելակերպը: Դրանց վերծանությունից պարզվում է, որ բանաստեղծը, կյանքի ամենածաղկուն շրջանում գտնվելով փառքի գագաթնակետին, պատրաստվելիս է եղել վերասլաց նոր թռիչքի, բայց, ավա՜ղ, փորձը դարձել է փորձանք՝ կտրուկ փոխելով թռիչքի ուղղությունն ու ընթացքը:

Արդ, լսենք բանաստեղծին. Մատյանի ԺԵ բանում՝ գրում է.

Իսկ կրկին առական, որ առ իս,  
 Որ ոչխարին տրուպն տարացուցի,  
 Որ յետին անգգայութեանն էր մատնեցեալ, մոլորեալ,  
 15 Եւ ի լերինն, ուր ոչ է այցելութիւն,  
 Ընդ գագանականացն դիւաց եւ կոոցն վայրենութեան թափառեալ,  
 Ո՛չ մերձաւոր գոլ սակաւ մի հաւտին:  
 Ո՛չ բան ունէի, որով եւ զցաւոցն աղէտ պատմէի,  
 Ո՛չ ձեռն ձգողական, որ համերցն է ազդողական:

Եթէ զնոսա ընկալար զապաբանեալսն աղերսանաց,  
 Որ մի՞նն ի միջոց մահու սահմանի էր չարչարեցեալ,  
 35 Իսկ միւսն ըստ անբանիցն անգգայութեան,  
 Վտարանդի բացամերժութեամբ յանբնակ վայրի վարանեալ՝  
 Ի բառաչ ձայնին բարբառոյ, որ անկերպաւոր աննշանական,  
 Աստուածային բարեխնամութեամբդ տնտեսեցեր  
 Զտիեզերահրաշն խնամողութիւն առ կորուսելոյն մեծ

թշվառութիւն,—

<sup>5</sup> Թեև մինչև օրս մեծ գործ է կատարվել Նարեկացու լեզվի և ոճի ուսումնասիրության ուղղությամբ (տե՛ս, օրինակ, Վ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Եր., 1975, Ա. Ղազինյան, Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Անթիլիաս, 1995, Գր. Պլըտեան, Գրիգոր Նարեկացին լեզուի սահմաններում մեջ, Վենետիկ, 1985, և այլն), բայց, համոզված եմ, միայն լեզվական միջոցների քննությամբ անկարելի է թափանցել Մատյանի մթին ծալքերի մեջ: Դրանում համոզվելու համար ասեմ միայն, որ, օրինակ, Գր. Պլըտյանը, իրավացիորեն զգալով Մատյանի հիմքում ընկած աղետի կամ ողբերգության գոյությունը, դա նույնացրել է լեզվական աղետի հետ: Նա գրում է. «Այսպես գրքի հիմունքին՝ կը գտնուի աղէտ մը, լեզուի խորտակման աղէտը, որու յիշատակարանը կը դառնայ գիրքը, որու մասին կը գրէ ան եւ գրելով կը միտի բեկում, անջատում, մեծ տարածութեամբ բաժնած մասերու միաւորումին, «տապանակի հանգստեան» (Ա, ա), 1,1) համարժէք է առ «վերստին գիտ կորուսեալս հոգւոյ» (Ա, ա): Տապանակը շարդում մարմինն եւ տապանակը վերակազմում՝ նորոգում մարմինն, նույն եւ մի անունը՝ խորտակում, յօդաւորուող ու վերընծայուող լեզուին, խօսքին ընդմէջէն: Խորտակումը, այսպէս, կը տանի ծնունդի մը: Լեզուին յօդաւորումը կը ստեղծէ լեզուն» (Էջ 111-112, ընդգծ. Ռեդ. է.- Լ. Մ.):

<sup>6</sup> Ի դեպ, Մատյանում ինքնակենսագրական ծածկագրություններն սկսվում են հենց այս գլխից: Այդ մասին տե՛ս Լ. Ղ. Միրզոյան, Նարեկի ծածկագրությունների վերծանության փորձ, «Բանքեր Երևանի համալսարանի», 2002, թիվ 3:

Յայտնեա՛ց վերստին եւ արդ գթութեանցդ խորք  
Եւ բարերարութեանցդ հոսանք՝  
Առ անարիմեալս առաելութեամբ վերագրեցելոցդ արինակու-

թեամբ,

Առ բազմարինակ մահու պարտապանս,  
Առ որ ի բարութեանց խառնից քաղցրութեանց յատուկ համս չար,  
Առ անդամս մարմնոյ արժանատրս հատման,  
Առ համաճարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վիրատոր,  
Առ հաւասարեալս անզգայութեանց անասնոց,  
Առ ատարացեալս յընտանութենէ իմաստնոց,  
Առ անմնանս հանգունակից բանատրութեանց:

50

Որ եթէ տարացոյց գոյր՝ ես ասէի,  
Թէ մնանակից գոյր իմ՝ պատմէի,  
Թէ հանգունակից գոյր՝ ես ճառէի,  
Թէ հաւասար գոյր՝ ես գրէի,  
Թէ զուգագործ գոյր՝ ցուցանէի,  
Թէ արինակ գոյր՝ ես ազդէի,  
Թէ յանցեալսն՝ հայթայթէի,  
Թէ ի ներկայումս աստ՝ ես յուսայի:  
Բայց քանզի անցեալ է ըստ արինակ  
Եւ հրաժարեալ ըստ մնանութեան...

Ինչպէս տեսնում ենք, բերված հատվածում բանաստեղծը դիմում է ոչ միայն լեզվական, այլև մտածական հնարքների ու հնարանքների, որպեսզի մի կողմից ասի իր ասելիքը, իսկ մյուս կողմից այն թաքցնի «անզեն աչքից»: Ըստ այդմ, պատմական դեպքերն ու իրադարձությունները ներկայացնում է ոչ թե անցյալից դեպի ներկան գալով, այլ, ընդհակառակը, ներկայից դեպի անցյալը գնալով: Այսինքն՝ նախ նկարագրում է ոչ հեռավոր անցյալում իր ունեցած հոգեկան ցնցումներն ու ծանր ապրումները, իսկ այնուհետև ծածկագրությամբ ներկայացնում դրանից առաջ իր ծավալած եռանդագին գործունեությունը: Ընդ որում, ինչպես վաղուց նկատված է, բանաստեղծն իր ասելիքն արտահայտում է հիմնականում այլաբանորեն: Ներկա դեպքում անցյալ ապառնի ժամանակով արտահայտում է անցյալում իր ծավալած գործունեությունը, որը հիշում է մի կողմից ակնհայտ հպարտությամբ, իսկ մյուս կողմից անթաքույց ցավով ու ասիտանքով: Այդ եմ վկայում բերված հատվածի վերջին երկու տողերը՝ «Բայց քանզի անցեալ է ըստ արինակ/ եւ հրաժարեալ ըստ մնանութեան»: Այսինքն՝ այդօրինակ գործելակերպը համարում է անցյալ, իսկ ներկայումս հրաժարվել է մման ձևով գործելուց: Իսկ թե բանաստեղծը երբ է գործել այդպես եռանդագին, պարզվում է ծածկագրության վերծանությունից: Ինչպես տեսնում ենք, բերված հատվածի 49-55 տողերն ունեն -էի վերջավորություն, իսկ 50-56 տողերը, թէ սկսվածք (ներկա դեպքում կարևոր է ոչ թե տողերի, այլ -էի և թէ-ի քանակը): Տառերի փոխարեն տեղադրելով իրենց թվային արժեքները՝ կունենանք հետևյալ արտահայտությունները՝ 7x20 և 9x7: Քանի որ այդ նույնը ունենք 7 անգամ, ուստի դրանց արտադրյալները՝ 140 և 63, պետք է բազմապատկել 7-ով, որից կստանանք 980 և 441: Երկրորդ թիվը, անշուշտ, հայկական տոմարով է, ուստի գումարենք 551: Այսպիսով, պարզվում է, որ բանաստեղծի հավաստմամբ 980-992 թթ.՝ ուղիղ 12-ամյա մի ժամանակահատված, եղել է իր գործունեության ամենաբուռն շրջանը:

Ուշագրավ է, որ բանաստեղծն իր կյանքի այդ նույն ժամանակահատվածին անդրադառնում է նաև Մատյանի ՄԹ՝ բանում՝ նորից 7 անգամ գործածելով «թէ էի» բառակապակցությունը: Ընդ որում, եթե առաջին դեպքում ներկայացնում է իր

գործունեության դրսևորման արտաքին, կարելի է ասել, քանակական կողմը, ապա երկրորդ դեպքում բնութագրում է դրա ներքին, որակական երեսը: Ահա այդ հատվածը.

- Քանզի թէ էի իբրև գՅոր,  
Ասէի զանձն իմ իբրև զնա արդար եւ անարատ,  
Թէ էի իբրև զՄովսէս,  
30 Ասէի վստահութեամբ զնորայսն՝  
Ծանիցէ տէր զայնոսիկ, որ իւրն եմ,  
Թէ էի իբրև զԴաւիթ, ասէի՝  
Արարի զիրաւունս եւ զարդարութիւն,  
Եւ դարձեալ զմեծն քան զբնութիւն մարմնոյ՝  
35 Ջմեղս թէ տեսանէի ի սրտի իմում, մի՛ լուիցէ ինձ տէր:  
Թէ էի իբրև զԵղիա, ասէի զանձն իմ այր աստուծոյ,  
Թէ էի իբրև զԵրեմիա, զքոյդ ճշմարտութիւն յանձն արիճակէի,  
Թէ էի իբրև զԵզեկիա, պարծէի զբարութն և զիրաւացին՝  
Գնացի առաջի քո արդարութեամբ,  
40 Թէ էի իբրև զՊաւղոս, ասէի զիս բնակարան,  
Ազդարան եւ ընդունարան աստուծոյ բանին:

Նախ՝ «թէ էի» բառակապակցության հետ կատարելով համապատասխան գործողություններ (տառերի թվային արժեքների տեղադրում, բազմապատկում, քրիստոնեական տոմարով արտահայտում և այլն) կատանք 992 և 980: Ինչպես տեսանք, Բան ԺԵ-ում Նարեկացին այնպես էր կառուցել իր խոսքը, որ ստացանք 980-992: Իսկ այս դեպքում բանաստեղծը գտել է նույնը ասելու նոր ձև, ուստի բերելով բնական տեսքի՝ նորից կատանք 980-992 թթ.: Երկրորդ՝ այս տարիներին բանաստեղծն իրեն բնութագրում է որպես «արդար եւ անարատ», տիրոջ ծառայում որդի, «զիրաւունս եւ զարդարութիւն» ստեղծող, մարմնի բնությունից մեծ մեղք չգործող, «այր աստուծոյ», Աստուծո ճշմարտությունը «յանձն» օրինակող, նրա առջևից «արդարութեամբ» գնացող, աստուծոյ խոսքի «ազդարան և ընդունարան»: Եթե փորձենք համեմատել Մատյանի այս երկու գլուխներում (ԺԵ և ԾԹ) բանաստեղծի բերած ինքնաբնութագրությունները, ապա դժվար չէ համոզվել, որ դրանք հար և նման են իրար: Ասենք նաև, որ վերը բերված ինքնակենսագրական մտքերը մասամբ հաստատվում են նաև բանաստեղծի մատենագրական ծառանգությամբ: Իմ կարծիքով «թէ արիճակ գոյր՝ ես ազդէի» և «զքոյդ ճշմարտութիւն յանձն արիճակէի» մտքերի վկայություն կարելի է համարել կճավա վանքի վանահորը Նարեկացու գրած հանրահայտ թուղթը, իսկ «թէ յանցեալսն՝ յայթայթէի» պնդումն ուղղակիորեն վերաբերում է «Ապարանից Ս. Խաչի պատմությանը» և նրան կից երկու ներքոդին (Խաչի և Աստվածածնի): Ներկա դեպքում նպատակ չունենալով զբաղվելու «Ապարանից Ս. Խաչի պատմությունը» մեծարժեք երկի ստեղծման ժամանակի հարցով՝ առայժմ կցանկանայի ասել միայն, որ այն գրվել է, անտարակույս, 992 թ. առաջ, ամենայն հավանականությամբ՝ 991 թ.: Բանն այն է, որ այս երեք ստեղծագործությանը Նարեկացու կցած հիշատակաբանն ավարտվում է հետևյալ խորհրդավոր նախադասությամբ. «Եւ ինձ տառապելոյս օգնես աղօթիւք, որ յարածամ դեգերիմ յընթեռնույն. իսկ գործ՝ և ոչ փոքր ինչ ժամանակ սահմանեալ որոշեմ»<sup>7</sup> (ընդգծ. իմն է - Հ. Մ.): Ինչպես արդեն ասվել է, Նարեկացու բուն գործունեությունն ընդհատվել է 992 թ., մինչդեռ բերված հատվածից զգացվում է, որ բանաստեղծը եռանդազին զբաղվում է ընթերցանությամբ,

<sup>7</sup> Սրբոյ փորն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնը, Վենետիկ, 1840, էջ 423 (այսուհետև՝ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնը):

իսկ դա նա կարող էր անել 992 թ. առաջ: Երկրորդ, որ շատ կարևոր է, Նարեկացին ակնարկում է ինչ-որ գործի մասին, որի վերաբերյալ խոստանում է որոշում կայացնել «ոչ փոքր ինչ ժամանակ» հետո: Իրավամբ ծագում են մի շարք հարցեր. այդ ի՞նչ գործ էր, որի մասին խոստանում է որոշում կայացնել, բայց ոչ շուտափույթ: Արդյո՞ք կայացրել է Նարեկացին խոստացած որոշումը: Եթե այո՛, ապա հետաքրքիր է իմանալ, թե ի՞նչ վախճան է ունեցել այն: Վերջապես, ինչու՞ Նարեկացին իր բուռն գործունեության ավարտը դնում է հենց 992 թ., երբ ինքը դեռ ընդամենը 47 տարեկան էր<sup>6</sup>: Հարցեր են սրանք, որոնց պատասխանը կարող է լույս սփռել Նարեկացու կենսագրության ինչ-ինչ մութ էջերի վրա:

Անկարևոր չէ և այն պարագան, որ Նարեկացու խնդրո առարկա հիշատակարանը ըստ էության պատասխան-ձամակ է՝ ուղղված «Ապարանից Ս. Խաչի պատմության» պատվիրատու, Ապարանից վանքի «հօգօր դիտապետ» Ստեփանոս Եպիսկոպոս Մոկացուն: Վերջինս բանաստեղծին հղած ձամակով պատվեր տալուց բացի, ամենայն հավանականությամբ, առաջարկել է նաև ինչ-որ գործ, որը Նարեկացուն մտորելու տեղիք է տվել, բայց չի շտապել պատասխանել, այլ խոստացել է որոշել առժամանակ հետո: Բոլոր դեպքերում վերը ասվածից կարող ենք եզրակացնել, որ Նարեկացու հաղորդմամբ իր բուռն գործունեությունն ընդհատվել է 992 թվականին, ընդ որում դրանից առաջ խորհելիս է եղել ինչ-որ գործի մասին: Իսկ ի՞նչ գործ էր այդ:

Պարզվում է, որ հայոց պատմության մեջ 992 թ. տեղի ունեցած պատմական միակ կարևոր իրադարձությունը եղել է կաթողիկոսական ընտրությունը: Այդ կապակցությամբ Միքայել Չամչյանը գրում է. «Խաչիկ կաթողիկոս հայոց կացեալ ի հայրապետութեան ամս, ԺԹ. և ամիսս իբր .6. վախճանեցաւ, և թաղեցաւ յիրում հանգստարանի ի հիւսիսյ կողմանէ եկեղեցւոյն Արգինայի՝ գոր իւր էր շինեալ: Յայնժամ Գագիկ արքայ շահնշահ ժողով մեծ արարեալ էպիսկոպոսաց յԱնի քաղաք, յորս գլխաւոր էր Սահակ Եպիսկոպոս Արշարունեաց, կացոյց հաւանութեամբ նոցա յաթօռ կաթողիկոսութեան հայոց գտէր Սարգիս առաջին, յամի տեառն .992. և ի թուին հայոց. նիս. յերկուշաբաթի աւուր զվնի սրբոյ զատկին»:

Սա էր մին ի միաբանից վանացն Սևանայ կղզւոյն, և երևելի ի մէջ կրօնաւորաց. սմա տուեալ էր Գագիկ արքայ յառաջ քան զթագաւորելն զվանսն Ծողազայ. և յետ թագաւորելոյն կարգեալ էր զնա առաջնորդ Սևանայ վանիցն. և զի քաջ գիտէր զառաքինական ընթացս կենաց նորա, նմին իրի յետ մահուան Խաչկայ զնա ետ ձեռնադրել կաթողիկոս: Սա ինքն տէր Սարգիս ունէր զմարդասէր և զքաղցր բարս. և էր խոնարհ ի կենցաղավարութեան՝ և խոհեմ ի կառավարութեան, միանգամայն և ճգնագգեաց և աղօթասէր. զի զոր ինչ կարօ պահոց և աղօթից ունէր ի վանականութեան իրում, զնոյն պահեաց անխափան և ի կաթողիկոսութեան: Այս Եայրապետ գտեալ զնշխարս ինչ սրբոց հոհիսիսմեանց՝ շինեաց եկեղեցի յանուն նոցա առընթեր կաթողիկէին Անույ:

Ի սորա աւուրս ծաղկեցաւ Ստեփաննոս վարդապետ Տարոնցի՝ Ասողիկ կամ Ասողնիկ կոչեցեալ. որ և հրամանաւ սորին Սարգսի արար զպատմութիւն հայոց ի ծագմանէ ազգին մինչև ի ժամանակս իւր՝ յերիս գիրս, ցամ տեառն .1000. կամ 1004» (ընդօժ. իմն է. - Հ. Մ.): Ասվածից այն տպավորությունն է ստացվում, որ Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի մահվանից հետո Գագիկ Ա թագավորը առանց որևէ դժվարության Անիում հրավիրել է ժողով, որտեղ Սարգիս Ա Սևանցին

<sup>6</sup> Այլևս անատարկելի է, որ Գրիգոր Նարեկացին ծնվել է 945 թ.: Այդ մասին տե՛ս Ն. Ղազարյան, Ինքնակենսագրական նորահայտ փաստեր Գրիգոր Նարեկացու մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 2002, թիվ 3, նաև՝ Հ. Միրզոյան, նշվ. աշխ.:

<sup>7</sup> Միքայել Չամչեան, Պատմութիւն հայոց, Բ. Բ, Եր., 1984, էջ 877:

միաձայն ընտրվել է կաթողիկոս: Հարցը նույն ձևով է փորձում ներկայացնել Մ. Օրմանյանը, բայց բերում է տարակուսանքի տեղիք տվող որոշ տեղեկություններ: Օրինակ, Սամվել Անեցու այն տեղեկությունը, որ Խաչիկ Ա Արշարունուց հետո հայոց աշխարհը որոշ ժամանակ մնացել է անառաջնորդ, Օրմանյանը համարում է Ասողիկից եկող թյուրիմացության արդյունք: Իսկ Ասողիկի թույլ տված թյուրիմացությունն այն է, «որ 439-990-ին կը դնէ Խաչիկի մահը, եւ 441-992-ին՝ Սարգիսի ընտրութիւնը (ԱՍՌ. 250), որ երկու տարույ պարսպ մը կը թողու: Սակայն եթէ իրօք այդչափ ատեն առանց կաթողիկոսի մնացած ըլլար աթոռը, հնար չէր որ Ասողիկ գայն յայտնապէս չյիշէր, եւ պատճառն ալ չբացատրէր եւ տեղակալութիւն վարողին անունը չտար, քանի որ իր աչքին ներքեւ, հաւանաբար իր իսկ պաշտօնական մասնակցութեամբ, կատարուած գործողութիւն մըն էր»<sup>10</sup>: Ինչ խոսք, ձևական տրամաբանական մոտեցմամբ իրավացի է Մ. Օրմանյանը, որ դեպքի ժամանակակից ու, հավանաբար, նաև մասնակից պատմագիրը պետք է որ այդ ամենը հաղորդէր ամենայն մանրամասնությամբ: Բայց «պետք է»-ն դեռ չի նշանակում, թէ է, քանզի պատմությունը միշտ ավելի հարուստ է, ավելի շատ գաղտնիքներ ու խորհուրդներ ունի, քան կարծում է այն հետահայաց ճանաչել ջանացող տրամաբանությունը: Չմոռանանք նաև, որ լռությունը երբեմն ավելի խոսուն է... Այո՛, Ասողիկը կարող էր պատմական այդ կարևոր իրադարձությանը վերաբերող ամեն ինչ ներկայացնել ճշգրիտ ու հավաստի, եթե, իհարկե, ցանկանար դա անել, կամ ավելի ճիշտ՝ դա նրան թույլ տար անել իր պատվիրատուն՝ նույն ինքը Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսը: Բանն այն է, որ Ասողիկն անհամեմատ ավելի համառոտ է ներկայացրել Սարգիս Ա Սևանցու ընտրությունն ու նրա գործունեության՝ իր ընդգրկած տարիները, քան սպասելի էր: Իսկ որ ամենից զարմանալին է, լինելով իր ժամանակի պատմական անցքերին, քաղաքական, ուսմանական, կրոնական ու մշակութային գործիչներին քաջածանոթ պատմագիր՝ ընդհանրապես լռության է մատնել Գրիգոր Նարեկացու անձն ու գործը, մինչդեռ բացառված է, որ լիներ անտեղյակ, որովհետև քաջատեղյակ էր Վասպուրականի պատմությանը, պատմական դեպքերին ու գործիչներին, որոնց հետ շփվում, նրանց պատվերով երկեր էր ստեղծում Նարեկացին: Օրինակ՝ իր պատմության 3-րդ հանդեսի ԽԶ զխում խոսելով Վասպուրականի Արծրունիների մասին՝ Ասողիկը թվարկում է Աբուսահիլ որդիների անունները՝ Աշոտ, Գուրգեն և Սենեքերիմ, որոնց մասին Նարեկացին Ասողիկից տարիներ առաջ գրել էր. «Անուն կրտսերոյն զհաւոյն եղեալ Սենեքերիմ մակադրեալ. իսկ միջնոյն՝ Գորգէն, և նախնոյն՝ Աշոտ: Բայց ի փրկագործն ծննդենէ առազանիճ նորոգութեան՝ աստուածութեանն որդեգրութեան, անդրանկիճ՝ Սահակ, երկրորդիճ՝ Խաչիկ, վերջնոյն՝ Յովհաննէս: Թագաւորեալք և փառաւորեալք ի մի ամանակի արք բարիք և աստուածասէրք, խոհեմութեամբ հանճարոյ առաւելեալք, և ըստ պատահմանն դիմաց պատկերի տեսման երեսի յաւէտ ցանկալիք: Իսկ ի սէր սրբոց, ի պատիւ ընտրելոց, ի յարգումն հեզոց, յընդունելութիւն ուղղոց, ի զարդ եկեղեցեաց, ի պայծառութիւն սրբութեան տեղեաց և քրիստոսեանն նշանաց, ի սպաս մարտիրոսաց, անկշիռք և անզուգականք»<sup>11</sup>:

Ավելին, Արծրունի եղբայրներից հենց Գուրգենի պատվերով էր Գրիգոր Նարեկացին 977 թ. գրել իր կարևորագույն երկերից մեկը՝ «Մեկնութիւն Երզոց երգոյն Սողոմոնի»:

Եթե Սարգիս Ա Սևանցին Գագիկ Ա Բագրատունու սիրելին էր և նրա հրամանով գումարված ժողովը, բնականաբար, կաթողիկոս ընտրեց նրա սիրելիին<sup>12</sup>,

<sup>10</sup> Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Բ. Ա., Ս. Էջմիածին, 2001, ս. 1349:  
<sup>11</sup> Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 387:  
<sup>12</sup> Տե՛ս Մաղաքիա արք. Օրմանեան, նշվ. աշխ., ս. 1350:

ապա Գրիգոր Նարեկացին նույնքան, գուցե և ավելի, սիրելին էր Արծրունի եղբայրների և հատկապես Գուրգեն Խաչիկի: Ինքնին հասկանալի է, որ որքան Գագիկ Ա Բագրատունին էր ցանկանում Հայոց հայրապետի գահին բազմեցնել իր սիրելիին, ինչպես և արեց, այնպես էլ Արծրունի եղբայրները պետք է ցանկանային նույն աթոռին տեսնել իրենց սիրելիին, և բացառված չէ հենց Գրիգոր Նարեկացուն, որը, եթե ոչ համայն հայության, ապա գեթ Վասպուրականի թագավորության շրջանակներում, վաղուց փայլող աստղ էր իր գրական ձիրքով, գիտական, փիլիսոփայական ու աստվածաբանական հարուստ գիտելիքներով և, իհարկե, սրբակենցաղ հոգևորականի վարք ու բարքով: Իսկ որ Արծրունի թագավորները վաղուց ջանում էին Վասպուրական տեղափոխել հայոց կաթողիկոսարանը կամ ծայրահեղ դեպքում կաթողիկոսական աթոռին տեսնել իրենց առաջադրած թեկնածուին, վեր է կասկածից: Չմոռանանք, որ Անանիա Ա Մոկացին Վասպուրականում էր ձեռնադրվել կաթողիկոս և հետո տեղափոխվել Բագրատունյաց թագավորություն, իսկ նրան հաջորդած Վահան Ա Սյունեցին, 972 թ. խուսափելով Անիում գումարված արտահերթ ժողովին մասնակցելուց, փախել էր Վասպուրական: Քանի որ Վասպուրականի թագավոր Արուստի Արծրունին նրան վերցրել էր իր հովանավորության տակ, ուստի երբ նրան հաջորդած Ստեփանոս Ա Սյունեցին Վահանի հետ բանակցելու նպատակով գնաց Վասպուրական, ոչ միայն չարժանացավ հայոց հայրապետին արժանավայել ընդունելության, այլև անմիջապես բանտարկվեց և որոշ ժամանակ անց մահացավ Կոտորոց բերդի բանտում: Այս ամենը հուշում է, որ Վասպուրականի թագավոր-եղբայրները կաթողիկոսի ընտրության ժամանակ հազիվ թե մի կողմ քաշվեին և գոհանային լուրի դիտորդի դերով: Թե Արծրունի եղբայրներն ինչ դիրք են բռնել կամ ինչ քայլեր են ձեռնարկել նոր կաթողիկոսի ընտրության ժամանակ, ցավոք, առայժմ ոչինչ ստել չենք կարող, բայց որ Գրիգոր Նարեկացին ներքաշվել է այդ պայքարի մեջ ու պարտվել, դա արդեն, կարելի է ասել, ստույգ է, որովհետև Մատյանի սկզբից մինչև վերջ ամենատարբեր ձևերով ու նրբերանգներով հնչեցվում է հենց այդ գաղափարը: Բազմաթիվ օրինակներից բերեմ մեկ-երկուսը: Մատյանի ԼԸ բանում կարդում ենք.

Բայց աւա՛ղ յաւէտ աստանար թշուառացելում եղկելի անձինս,

Քանզի կարգ բանիս բերէ ինձ խառնել

- 50 Ընդ ձայն աւետեսցս բողոք գութիս,  
 Վասն զի ընդ այսոսիկ առընթեր սորին  
 Գայ արդարութիւնն եւ կշիռքն,  
 Վճիռն և հատուցմունքն,  
 Քննութիւնն եւ լոյսն,

- 55 Յանդիմանութիւնն և դամբարքն,  
 Մերկութիւնն եւ պատկառանքն,  
 Յայտնութիւնն եւ ամալքն,  
 Անբիծն եւ վաստակքն,  
 Թիւրեալն եւ պատիժքն:

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծն ասում է, որ ավետյաց ձայնին խառնում է գույժի բողոքը, իսկ թվարկվող շարքն ավարտում է «թիւրեալն եւ պատիժքն» արտահայտությամբ: Փաստորեն թյուրյալն ինքը բանաստեղծն էր, ուստի և ինքն է նաև պատիժներ ստացողը, որի դեմ էլ հենց բողոքում է: Դրանում համոզվելու համար շարունակենք նույն գլխի ընթերցումը.

- 60 Դարձեալ վերստին աշխար կրկին եղկելոյս,

Քանզի գայ հասանէ առ հասկ հասակիս անհնարին բարկութեամբ

Մանգաղն՝ առ հունձսն,  
Դատարոն՝ առ ատեանն,  
Հգարն՝ առ բեմն,

- 65 Սպառնացեալն՝ առ կորուստն,  
Բագունն՝ առ դատաստանն,  
Գաւագան խրատուն՝ առ հարուածն,  
Սպառագիւնութիւնն՝ առ նախանձն,  
Հովիւն՝ առ ընտրութիւնն:

Եթէ ուշադիր համեմատենք 52-59 և 62-69 տողերը, ապա կտեսնենք, որ ներքին սերտ կապ կա դրանց բովանդակությունների միջև, որն ամենից ուժեղ է 59-րդ և 69-րդ տողերի միջև: Եթէ 59-րդ տողում\* ասում է, որ թյուրյալը պատիժներ է ստանում, ապա 64-րդ տողում ասում է, որ հզորը հասնում է բեմին, իսկ 69-րդ տողում՝ հովիվը հասնում է ընտրության: Եւ հենց ընտրված հովիվն էլ դարձել է թյուրյալ բանաստեղծին պատժողը:

Գլխի ավարտին Նարեկացին արդեն Տիրոջից խնդրում է օրհնության ձեռքով իրեն գորություն ընձեռել ու հետին տագնապի մեջ գտնվող բանաստեղծին «մխիթարել, բժշկել, քաւել եւ կենագործել»: Ինչպէս արդեն ասվել է, Մատյանը հասկանալու համար կարևոր է թափանցել ոչ միայն նրա լեզվական, այլ և մտածական առանձնահատկությունների մեջ: Ըստ այդմ, կցանկանայի ուշադրություն հրավիրել մեկ երևույթի վրա: Սովորաբար բանաստեղծն իր ասելիքն արտահայտում է թույլից դեպի ուժեղը, անկարևորից դեպի կարևորը, սովորականից դեպի անսովորը տանող ընթացքով և, իբրև կանոն, իր բուն ասելիքն ասում է վերջում: Ներկա դեպքում ամենավերջին տեղում դրված կենագործել բառն ունի խիստ կարևոր իմաստ ու նշանակություն: Դրանում համոզվելու համար բավական է բերել այդ բառի բառարանային բացատրությունը. «Կենդանի առնել. կենդանացուցանել. նորոգել ի կեանս. յարուցանել զձեռեալն. և Պահել պահպանել ի կենդանութեան: Կեանք որ կենագործ է զմեզ: Փրկական խորհրդով կենագործեաց զհաւատացեալս: Չմահացեալսն կենագործ է տէր»<sup>13</sup>: Բերված իմաստներից, կարծում եմ, դժվար չէ կոսահել, որ խոսքը վերաբերում է ոչ թե երկրային, այլ երկնային կյանքին, որին հնարավոր է հասնել նախ և առաջ հոգևորականի կյանքով, իհարկե՛ մեղքերը գիտակցելու, խոստովանելու, քավելու և մաքրվելու դեպքում: Ո՛վ, ո՛վ, բայց Նարեկացին, էլնելով հատկապես հարազատ հոր ողբերգական վախճանից, շատ լավ էր հասկանում, թե ինչ է նշանակում լինել պատժված ու մահանալ առանց զղջման ու ներման: Ուստի Աստծուց խնդրում է մխիթարել իրեն, բուժել հիվանդացած հոգին, քավել ու կենագործել: Իսկ դա հնարավոր էր իրականացնել միայն զղջալու, ապաշխարելու, հոգևորականի կորցրած պատիվն ու աստիճանը վերականգնելու ճանապարհով, որը և խնդրում է Տիրոջից:

Մատյանը գրելիս Նարեկացու պատժված ու նախկին դիրքից զրկված լինելու մասին ուղղակի ու ակնհայտ տեղեկություններ գտնում ենք հատկապես ԻԵ բանում: Այստեղ բանաստեղծը, մարդկային կյանքը համարելով ծիպացող ծով, իրեն նմանեցնում է ծովում տատանվող նավակի: Բանաստեղծի հավաստմամբ ինչ-որ ժամանակ ինքը հանգիստ ու խաղաղ, հպարտ ու ինքնավստահ, առանց վտանգի դյուզն-իսկ զգացողության նավարկելիս է եղել խաղաղ ծովում ուր որ է

\* Քանի որ մեքենայները կատարում ենք Մատյանի ակադեմիական հրատարակությունից, ուստի տող հասկացությունը գործածում ենք պայմանականորեն, այնքանով, որքանով օգտագործված աղբյուրում այդպես է:

<sup>13</sup> «Նոր բառգիրք հայկական լեզուի», հ. Ա, Եր., 1979, էջ 1083:



ափ հասնելու սպասումով: Բայց, ցավոք, անսպասելիորեն ծովը փոթորկվել է, ու նավակը, բախվելով հուժկու ալիքներին, ջարդուփշուր է եղել՝ բաժանվելով անթիվ մասերի: Այնուհետև գեղանկարչական զգայականությամբ պատկերելով նավակի քայքայման գործընթացը, հաջորդ ենթաօլիտում արդեն իրեն նմանեցնելով խորտակված նավի մասին ծովափին՝ «ձեռն ի ծնատի եղեալ», մտածող նավապետի՝ բանաստեղծը գրում է.

45 Արգասիք իրին յիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ:  
Նատուղիդ հանդէպ նախն դեգերեալ ողբայ,  
Ձեռն ի ծնատի եղեալ՝ արտասուաց գետս իջուցանէ,  
Նշմարք սակաւ մնացուածոցն, ի ծայրից ծիփմանց ազդելով  
ծովուն,

Իբր խողխողեալ բանաւոր, ողորմագին թախծանաւք հեծէ:  
50 Վասն զի թէ զբարի նաւապետն երկնաւորաւքն զարաւք  
յաշխարհիս ծովու

Առ ի զխորտակեալս իմ տապան իմանալի գոյութեանս  
Աոցէ աշխարել բանիս յարմարութիւն,  
Ոչ ինչ վրիպեցէ ի ստուգութենէ:

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծի իսկ հավաստմամբ, նավապետի կերպարը ոչ թե մտացածին ու վերացական է, այլ խորհրդանշում է հենց բանաստեղծին: Այդ է վկայում ոչ միայն բերված հատվածը, այլև նույն գլխի շարունակությունը: Այստեղ արդեն բանաստեղծը հայացքը հառում է ապագային՝ երագելով վերականգնված տեսնել իր խորտակված նավ-տապանակը: Թեև տարակուսանքով, բայցևայնպես բանաստեղծը հյուսում է ջարդուփշուր եղած տապանակ-հոգևորականի վերակառուցման-վերականգնման կրազանքը.

Արդ, իցէ՞ թէ յաւելից հայել զբազմախորտակելի տապանակ  
մարմնոյս իմոյ նորոգեալ,  
Իցէ՞ արդէք տեսանել զփշրեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ,  
Իցէ՞ արդէք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ վերստին  
կցեալ,

65 Իցէ՞ արդէք տեսանել զյոզնաթախիծ սիրտ վշտացելոյս  
բերկրեցեալ:  
Արդ, իցէ՞ ակն ունել նայել զյաւէտ խաթարեալ կերպարան  
բնութեանս կրկին հանդերձեալ,  
Իցէ՞ արդէք թէ տեսից զքակտեալ տաղաւար թշուառացելումս  
միսանգամ կանգնեցեալ,  
Իգէ՞ արդէք յուսալի նայել զտարամերժեալ գերիս ազատեալ,  
Հպաքէն գուցէ՞ ակն ունել զանկեալս ի շնորհէդ լուսոյ դարձեալ  
կազդուրեալ:

70 Արդէք տեսի՞ց զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութեան  
յողորմութիւն ինձ երեւեցեալ,  
Եթէ տեսի՞ց երբէք զամենատխտոր կերպարան հոգւոյս իմոյ  
ժպտեցեալ,  
Արդէք լուա՞յց ընդ ձայնի գուծիս աւետեաց համբաւ ինձ  
առաքեցեալ՝,

\* Հետաքրքիր է, որ այստեղ ասում է, թե «Արդէք լուայց ընդ ձայնի գուծիս աւետեաց համբաւ ինձ առաքեցեալ», իսկ ԼԸ բանում գրելու է. «Քանզի կարգ բանիս բերէ ինձ խառնել / ընդ ձայն աւետեաց բողոք գուծիս»: Ինչպես տեսնում ենք, բանաստեղծն առաջին դեպքում երագում է, որ իր գուծի ձայնի հետ իրեն առաքվի «աւետեաց համբաւ», իսկ երկրորդ դեպքում ասում է, որ ավետյաց ձայնիս խառնում եմ «բողոք գուծիս»:

Արդեւք տեսի՞ց զքիրակործան վնասեցեալս անաւթ կազմեցեալ:

Իցէ՞ թէ տեսցեն պատուհանք աչացս իմաստից զմորհակ  
պարտուցս իմոց պատառեալ,

75 Եթէ յայտնեսցի՞ արն իմ անձկութեան շնորհին քաւութեան  
բարոք ինձ ծագեալ,  
Արդեւք մտի՞ց ի խրախճանութիւն խորանին լուսոյ՝ քեւ  
առաջնորդեալ:

Իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքս, ըստ Եզեկիելի,  
Ցամաքեալքս ի կենդանութեանց՝ եկաւորութեամբ ազդողական  
շնչոյս զարացեալ,

Իցէ՞ թէ յաւելից հայել ի տաճար սուրբ քո, աղաղակաւն  
մարգարէին

80 Ի պորտոյ կիտին, հերքեալ ի լուսոյ, որ կամ առաջի քո  
ամաչեցեալ:

Եթէ լինիցի՞ խաւարասնունդս մթացելոյ ծագման առաւառտ,  
Եթէ հասցէ՞ տեսանել զտագնապեալս մշտասառոյց յեղանակս  
զարմանն մաւտ,

Եթէ տեսի՞ց զցատլ անձրեւոյն կանաչացուցանողն հոգւոց ինձ  
արաւտ,

Եթէ իցէ՞ երբէք նկատել զգագանաքեկ հերքելի ոչխարս վերստին  
կամաց գթութեան քո հաւտ:

Դժվար չէ տեսնել, որ 21 հարցով ամենատարբեր ձևերով բացեիբաց ասում է, որ ինքը պատժված, հոգևորականի պաշտոնից զրկված, Քրիստոսի հոտից բաժանված, հոգեպես փշրված ու կործանված վիճակում է, ուստի երազում է նորից վերականգնվել ու վերադառնալ Քրիստոսի հոտը: Անշուշտ, հարցումները թեն տարբեր ձևով, բայց ըստ էությանն նույնն են ազդարարում, սակայն կցանկանայի ընդգծված հատվածներից ուշադրություն հրավիրել հատկապես «բաժանեցեալս միջոցս մեծաւ վերստին կցեալ», «զմորհակ պարտուցս իմոց պատառեալ», «Արդեւք մտի՞ց ի խրախճանութիւն խորանին լուսոյ» և «զգագանաքեկ հերքելի ոչխարս վերստին կամաց գթութեան քո հաւտ» հատվածների վրա, որոնցից առաջինով ասում է, որ երկար ժամանակ է ինչ բաժանված է, երկրորդով երազում է, որ պատուվի իր պարտքերի մորհակը, այսինքն՝ պատիժն ազդարարող գրությունը, իսկ երրորդով փափագում է մտնել «ի խրախճանութիւն խորանին լուսոյ», այսինքն՝ վերստանալ եկեղեցու բեմից քարոզելու իրավունքը, որը խրախճանք է իր համար, իսկ դրանցից զրկվածությունը՝ իսկական ողբերգություն: Վերջապես, չորրորդով նորից հիշեցնում է ավետարանական կորուսյալ ոչխարի օրինակը, որը, ինչ խոսք, միայնակ մնալու դեպքում անպայման դառնալու է գագանների կեր: Ինչպես տեսանք, Մատթայի ԺԵ գլխում ևս իրեն համեմատում էր հոտից բաժանված մոլորյալ ոչխարի հետ:

Ուշագրավ է, որ Նարեկացին ոչ միայն զանազան ձևերով հայտնում է իր հետ պատահած մեծագույն ողբերգության մասին, այլև դրա թվականը: Ավելին, բանաստեղծն անկեղծորեն զղջում է այդ ամենի համար, ուստի իր մեղքը քավելու և ներվելու ամենաճշմարիտ ու հուսալի միջոցը համարում է անկեղծ ու կամավոր խոստովանությունը, որին էլ նվիրված է Մատթայի ամբողջ Բան ԻԷ-ն: Այստեղ բանաստեղծը նախ պարզորոշ ասում է, որ իր այս ճառը բաղկացած է զուտ պաղատանքներից, ուստի ինքը գրելու է խոստովանելով ու զղջալով և այդ ձևով բացեիբաց հայտնելու է զաղտնածածուկ բաներ: Ընդ որում, խոստովանությունը,

որպէս այդպիսին, համարում է «հոգեկեցոյցն», որ «Զճանակում է «կեցոցիչ հոգոյ, փրկարար»<sup>14</sup>: Նա գրում է.

- 5 Դարձեալ սկսայց զճառ պաղատանցս  
Խոստովանարէն, զղջականաբար,  
Զգաղտնածածուկն՝ յայտնաբարբառ,  
Զի անդրադարձութեամբ սկսմամբն եւ վերջաւորաւքն բառիք  
Զնոյն համաձեւութիւն ի մի թախանձ մի՞ն մաղթանաց  
Հոգեկեցոյցն խոնարհութեան աստանար եղից:

Իր խոստումը կատարած լինելու համար Բ ենթագլխի բոլոր տողերը (11) սկսում ու վերջացնում է «մեղայ» բառով: Ընդ որում, յուրաքանչյուր տողի առաջին կէտում դրվատում է Աստծուն, իսկ երկրորդ կէտում՝ պարսպվում իրեն, ասելով՝ «անարգս մեղայ», «խաւարս մեղայ», «արդարեւ մեղայ», «յայտնապէս մեղայ», «ստուգապէս մեղայ», «անբաս մեղայ», «նե՛գողս մեղայ», «բազումս մեղայ», «հանապազ մեղայ», «մահու չափ մեղայ», «իսկապէս մեղայ»: Այս բոլորից ուշագրավ են հատկապէս «արդարեւ մեղայ», «յայտնապէս մեղայ», «ստուգապէս մեղայ», «իսկապէս մեղայ» արտահայտությունները, որոնք ցուցադրում են մեղայի անկեղծությունը, ճշմարտությունն ու իսկությունը: Բայց եթէ մինչև այժմ բանաստեղծը խոսում էր իր մեղայի իսկության մասին, ապա Գ ենթագլխում արդեն խոսում է ընդհանրապէս մեղայ-ի «Զճանակության մասին, որը ներկա դեպքում շատ կարևոր է, ուստի բերում եմ ամբողջությամբ:

- Ահա, արդարեւ, արհմեալ է հատուած բանի  
Յուսադրական սրտի այսր Մեղայ-ի:  
Սոյն սա պատուելի սուանդ, անմոռաց պատուէր,  
25 Հայրենեացն տուր, նախահարցն արւեն,  
Համայնից թոշակ. անհերքելի բան,  
Զարարոր պատասխանի, կենդանութեան կամորջ,  
Ախորժելի վերնոյն, սիրելի սրբոց,  
Անխազելի կապ, հրաշալի բարբառ,  
30 Անշրջելի պատճառ, բաղձալի աղերս,  
Փափագելի սեղան, սրտաբեկ հնչումն,  
Անհնարից ճարակ, կարծրութեան վանիչ,  
Աստուածապաշտից սահման, հեթանոսաց գիրք,  
Վաղճոց կանոն, քրիստոնէից հարազատ,  
35 Արարչութեանն յաղթող, անջրպետ հզար,  
Խորոց ահաւոր, արուեստ բարձրութեան,  
Խորութիւն անչափ, հիացման տեսիլ,  
Խորհուրդ կնքեալ, ընդ որ չիք ումեք անցանել,  
Եթէ ոչ անըմբռնելի մտաց արագման զսա ծանիցէ:  
40 Ձայն բարեպատեհ հրաշաւորական,  
Որ ոչ յիշատակեցաւ ի վերջին դատակնիք դատուն լքելոյ.  
Գուցէ առ մի՞ն խզեալ համառատ  
Զվրիժակն իրաւանց մահուն հասելոյ,  
Յորմէ ընտրութիւնն ապագործ եղեալ՝  
45 Զսահմանն յափտեճական քակտեցէ:  
Զարդ փառաց մեծութեան,  
Որով նոյն ինքն աստուածութիւնն պսակեալ բարգաւաճի:

<sup>14</sup> Նոյն տեղում, Բ. Բ, Եր., 1981, էջ 111:

Ամբողջ ենթագլխի վերլուծությունն ու գնահատությունը թողնելով մի կողմ կցանկանալի ուշադրություն հրավիրել հատկապես ընդգծված մտքերից մի քանիսի վրա: Ինչպես տեսնում ենք, բանաստեղծն անկեղծորեն ասված մեղայն համարում է «յուսադրական սրտի», «կենդանութեան կամուրջ», «անխզելի կապ», «կարծրութեան վանիչ», «աստուածապաշտից սահման» և այլն, որոնք բոլորն էլ կարևոր են յուրաքանչյուր հավատացյալի, բայց առաջին հերթին հոգևորականի համար: «Կենդանութեան կամուրջ» ասելով բանաստեղծը, բնականաբար, հասկանում էր ոչ թե երկրային, այլ երկնային աշխարհի մասին: Այսինքն՝ մեղայնով է, որ կամուրջ է գցվում այն արտասանող հավատացյալի, իսկ ներկա դեպքում՝ բանաստեղծի և Տիրոջ միջև, և դրանով իսկ հաստատվում է կենդանի կապ նրանց միջև:

Բերված հատվածում առանձնապես կարևոր է 41-րդ տողը՝ «Որ ոչ յիշատակեցաւ ի վերջին դատակնիք դասուն լքելոյ»: Քննական բնագրի ծանոթագրության մեջ ասվում է, որ միջնադարյան լուծմունքի և Հ. Նայյանի կարծիքով Նարեկացին ակնարկում է դևերի դասը, իսկ Գ. Ավետիքյանի մեկնաբանությամբ բանաստեղծի խոսքը վերաբերում է «առհասարակ մեղավորների դասին»<sup>15</sup>: Մինչդեռ, իմ խորին համոզմամբ, բանաստեղծն այստեղ խոսում է հենց իր մասին, որ մեղադրվելով ինչ-որ հանցանքի մեջ՝ մեղայ չէր ասել, որի համար էլ պատժվել էր: Հիշենք նաև, որ Նարեկացու հայրը ո՛չ բանադրվելուց առաջ և ո՛չ էլ հետո մեղայ չէր ասել ու մահացել էր բանադրանքը վրան: Քաջ հասկանալով, թե ինչ է նշանակում պատժվել ու չներվել, բանաստեղծը հենց այդ նպատակով էլ գրել է Մատյանը, որպեսզի, թեկուզև ուշացումով, անկեղծորեն մեղայ ասի և ներումն ստանա:

Ամբողջ ենթագլուխը լինելով շատ կարևոր Նարեկացու մտածողության ու Մատյանի խորքը հասկանալու համար՝ այնուամենայնիվ ամենահանգուցային ու խորհրդավոր արտահայտությունը մնում է «հատուած բանի» բառակապակցությունը, որը վաղուց ի վեր արժանացել է մեկնիչների, թարգմանիչների ու նարեկացիագետների ուշադրությանը՝ ստանալով ամենատարբեր մեկնաբանություններ: Մատյանի քննական հրատարակության մեջ ի մի բերելով այդ կապակցությամբ արտահայտված տեսակետները՝ Պ. Խաչատրյանը եզրակացնում է. «Իհարկե, Նարեկացին իր երկի հատվածը «արհնեալ» չէր համարի, դա կհնչեր որպես ինքնամեծարում, հետևապես հատուած բանի-ն ավելի ճիշտ կլինի ընկալել մեղայ բառի վերաբերմամբ, որը, ինչպես միջնադարյան մյուս խորհրդապաշտների, այնպես էլ Նարեկացու համար «արհնեալ» էր և միջոց՝ մաքրվելու և հասնելու աստվածային կատարելության: Եվ շարունակության մեջ բանաստեղծը դարձյալ խոսում է Մեղայ-ի մասին («Սոյն սա պատուելի աւանդ...»)՝ կարծես հավատելով, որ իր ասածը վերաբերում էր ոչ թե գլխի մի հատվածին, այլ զղջման գաղափարին, որի արտահայտությունն է հիշյալ բառը»<sup>16</sup> (ընդգծ. հեղինակիին և - Հ. Մ.): Լիովին ընդունելով անվանի նարեկացիագետի տեսակետը, որ «հատուած բանի» արտահայտությունը, իրոք, վերաբերում է մեղայ բառին, կցանկանալի ավելացնել նաև, որ դրանով դեռ չի բացահայտվում տվյալ արտահայտության իմաստը: Մինչդեռ եթե բանաստեղծը այն գործածել է որպես մեղայ-ի որոշիչ, ապա նշանակում է, որ այն պետք է ցույց տա «որակական, քանակական, վիճակային, դիրքային»<sup>17</sup> և կամ մեկ այլ հատկանիշ: Իսկ որն է «հատուած բանի» որոշիչի ցույց տված հատկանիշը:

<sup>15</sup> Գրիգոր Նարեկացի, Մատենանոցի թղթերգութեան, աշխատասիրությանը՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 1024:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, II մաս, Եր., 1975, էջ 186:

Քանի որ «հատուած բանի» արտահայտությունը վերաբերում է «մեղայ» բառին, ուստի այն պետք է հասկանալ որպես հատած, հատված, կտրած, կտրված բառ: Իսկ, ինչպես գիտենք, հայերենում յ-ն համարվում է կիսաձայն, այսինքն՝ եթե մյուս հնչյուններն ունեն լրիվ ձայն, ապա յ-ն ունի կես ձայն: Իբրև հնչյուն այն կիսաձայն է, իսկ իբրև տառ՝ մաշտոցյան այբուբենում ունի լրիվ թվային արժեք, ինչպես մյուս բոլոր տառերը: Հետևաբար, մեղայ բառը կոչելով «հատուած բանի», իմ կարծիքով, բանաստեղծը դրանով հասկացրել է, որ յ տառին թվային արժեք տալու դեպքում կարելի է, կամ պետք է վերցնել կես արժեքը: Այդ է հուշում նաև այն փաստը, որ սովյալ գլխում մեղայ-ով սկսվող տողերն ավարտվում են մեղայ-ով, այսինքն՝ ընդամենը 18 տողում (11+7) բանաստեղծը մեղայ բառը գործածում է 18x2=36 անգամ: Ըստ այդմ, եթե փորձենք «մեղայ» բառի տառերի փոխարեն տեղադրել իրենց թվային արժեքները, կունենանք հետևյալ հավասարումը՝ 200+5+90+1+ (300:2)=446: Վերջինս քրիստոնեական տոմարով արտահայտելու համար ավելացնելով 551՝ կատանանք 997, որը, իմ խորին համոզմամբ, Նարեկացու պատժվելու թվականն է: Հարկավ, առաջին հայացքից կարող է թվալ, թե գործ ունենք ակնհայտ հակասության հետ, քանզի մի կողմից բանաստեղծը մեղայ-ով ծածկագրել է իր կյանքի ամենաողբերգական իրողությունը՝ պատժվելու փաստը, իսկ մյուս կողմից փառաբանում է մեղայ-ն, ասելով՝ «Ահա. արդարեւ, արհնեալ է հատուած բանի / յուսադրական սրտի այսր Մեղայ-ի»: Իրականում ես այստեղ ոչ մի հակասություն չեմ տեսնում, որովհետև, այո՛, իր կյանքի այդ ամենաահավոր իրողությունից բանաստեղծը կարող էր ազատվել միայն ու միայն մեղայ-ի օգնությամբ: Փաստորեն բանաստեղծի համար մեղայ-ն, լինելով 997 թ. ստացած ծանր հարվածի ծնունդ ու թելադրանք, միաժամանակ ամենահուսալի միջոցն էր նրանից ազատվելու: Ահա թե ինչու բանաստեղծը հենց մեղայ-ով է ծածկագրել իր կյանքի ամենաահավոր փաստը, որը միաժամանակ պատճառ է դարձել «Մատենան ողբերգութեան» հանճարեղ ստեղծագործության արարման: Ըստ էության այդ է հուշում նաև բանաստեղծի «գաղտնածածուկն՝ յայտնաբարբառ» արտահայտությունը (տ. 7):

Համոզված եմ, ոմանց կարող է անհաճո ու անընդունելի թվալ հետագայում հայ եկեղեցու սրբերի շարքը դասված բանաստեղծի պատժված լինելու մասին իմ այս եզրակացությունը, բայց չմոռանաք, որ պատմությունը մնում է պատմություն՝ անկախ այն բանից՝ հաճո է, թե տհաճ: Հետևաբար, ավելի ճիշտ կլինի լսել ու հասկանալ անձամբ բանաստեղծին, քան հետևել մեր զգացմունքներին: Ուստի շարունակենք ընթերցել Մատյանը: Հաջորդ ենթագլխում գրում է.

Քանզի ո՞վ ոք դիմեալ կալաւ գեղջերաց սեղանոյ այսր սրբութեան

Եւ ոչ առժամայն պրծեալ ի պատժոց՝ անարատ գտաւ:

50 Ի՛ւ՛ւ. եթէ Աքար Զամբեան եւ Սաւուղ Կիսեան եւ Յուդա Սիմոնեան,

Ասելով զսոյն, ոչ արդարացան,

Եւ ես վկայեմ՝ իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի,

Զի ակամայիցն բռնադատելոց ոչ է կատարեալ սէր,

Ուստի եւ ոչ բովանդակապէս փրկութիւն:

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծի խորին համոզմամբ, ներվելու համար զղջումը պետք է լինի կամավոր, այլապես Տերը չի ների, ինչպես չի ներել վերը թվարկած երեք անձանց: Մնացած բոլոր դեպքերում, երբ զղջումը եղել է կամավոր, անկեղծ ու ճշմարիտ, ապա, անկախ կատարած մեղքի մեծությունից, զղջացողն անպայման ներվել է: Հիշենք հատկապես անատակ որդու և պոռնիկ կանանց աստվածաշնչյան օրինակները: Վերջիններս Նարեկացուն հույս ու հավատ ներշնչող, նաև նրա կողմից սիրված ու հարգված կերպարներ են: Ուստի հայցելով Աստծու գթությունը, որը, իր իսկ բառերով ասած, «Ռո զանատակ որդին մերձեցոյց

ի հայրենի ժառանգութիւնն, / եւ զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն  
արդարոցն երանութեան» (Բան ԼԳ, տ. 168-169), բանաստեղծը արդեն մի կողմ  
դնելով աղերսական ոճը, գլխի վերջում ասես Աստծուց արդարություն ու հավա-  
սարություն պահանջողի տոնով ազդարարում է.

170 Այո՛, այո՛, եւ ես մի եմ ի նոցանէ,  
Եւ զի՛ս ընկալ ընդ նոսին...

Բանաստեղծի այս ընդգծված համարձակությունն ու ինքնավստահությունը  
գալիս են այն բանից, որ մինչ այդ արդեն հիշատակելով Աստծուց չներված վերո-  
հիշյալ եղյակի անուճները, որպէս ոչ կամավոր զղջացողների, բացեիքաց հայ-  
տարարել է (Բան ԻԷ, տ. 55-56).

55 Իսկ ես կամաւ համբուրեմ՝ դարձեալ կրկնելով  
Ջերջանիկ բանիդ զմկրտութեան հարագատու:

Ի հաստատումն իր այս մտքերի անկեղծությամբ՝ բանաստեղծն այնուհետև  
յոթ տող անընդմեջ սկսում ու վերջացնում է մեղայ-ով: Կարծես ցանկանալով ըն-  
թերցողին անպայման հասկացնել իր միտք բանի՛ն՝ այս նույն գլխի (ԻԷ) հաջորդ  
ենթագլխում կրկին անդրադառնալով հոգևոր աշխարհին, գրում է.

Վերջին ինձ կրկին աշխար հոգևոր,  
65 Ջի ի կորուստ եւ ի կործանումն ինձ երեւեցաւ,  
Ջի անդարձս վարատեցայ,  
Ջի որդիս թշնամի գրեցայ,  
Ջի ի բարձանց երկնից ընկեցայ,

Այլ իմն կսկիծ դժնդակ սրտի,  
Ջի զիս ունին, առ որ չեմ:

Ջլոյսս ի մոայլ շրջեալ,  
Ջգերանակիր ակնս թշուտացեալ,  
80 Ջջահս փառաց շիջեալ...

Կարծում եմ, այսքան պարզորոշ ու անկեղծորեն ասված խոսքերից հետո ոչ  
մի հիմք չունենք չհավատալու Նարեկացուն, առավել ևս իրավունք չունենք ավե-  
լին պահանջելու: Բայց բանաստեղծը, ասես զգալով ընթերցողական ինչ-որ թե-  
րահավատություն ու չհասկացված մնալու վտանգ, է՝ ենթագլխի առաջին տողե-  
րով ազդարարում է.

Եւ քանզի կարող ես զայս ամենայն զպարտս թողոյ  
Եւ զխայթուածս մահու բժշկել...

Այնուհետև, շարունակելով Աստծու հետ իր գրույցը, է՝ ենթագլխում բանաս-  
տեղծն աղերսում է, որ Աստված, համաձայն իր սովորության, վարվի մարդասի-  
րությամբ, իսկ եթե հանկարծ Աստված խստանա, սաստկանա, սպառնա և այլն,  
ապա ինքը կմնա՝

Ջբարեացն պարգեւ մատնեալ,  
Ջերանութիւնն թողեալ,  
Ջշնորհն լքեալ, զուխտն ցրեալ,  
140 Ջաւանդն կենաց մոռացեալ,  
Ջհամարձակութեանն վստահութիւն կորուսեալ,  
Ջստեղծիչդ էիս բարկացուցեալ,  
Ջանճառութիւն շնորհին ընդոտնեալ,  
Ջպատուոյն պատկեր այլայլեալ:

Գլխի վերջում արդեն բանաստեղծը հույս է հայտնում, որ եթե Հիսուս Քրիստոսը մարդասիրաբար այցելի իրեն և ների իր մեծամեծ մեղքերը, ապա դրանով իսկ «...ամենառատ քաղցրութեամբ պատուաստեալ ի քեզ, / զքոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ / վերստին գտեալ պնդեցայց՝ քառեալ եւ ստեղծեալ կրկին / ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց» (տ. 149-152):

Դիտելի է, որ Մատյանի ԾԵ գլխում բանաստեղծը, Աստուծոյ խնդրելով օրհնել իր անիծածներին, արձակել իր բանադրածներին, ազատել դատապարտածներին, բարեգործել նշույթներին և այլն, այնուամենայնիվ չի կարողանում մոռանալ թշնամիների կողմից իր հանդէպ գործադրված գաղտնի ու բացահայտ խարդավանքները, ուստի ցավով ու ափսոսանքով ասում է, որ

... յաւէտ սխալեալ անկայ,

Իբրեւ գողողակ մթային ոչ ընտելական,

40 Ի խաղբս մահու անզգայապէս,

Չիմացայ գկորուստն, չգիտացի գորոգայթն,

Չտեսի զըմբռնող որսոյն ծածուկ մեքենայս,

Չկարծեցի զխաբումն կերպարանաց կեղծաւոր վարմին,

Չնկատեցի զգայթակղութիւնն շուրջանակի,

45 Չշաւշափեցի զպատանդիչ զցանցարկ կարթին:

Ժամանեցի ինձ չարիք,

Եւ ես ոչ կարացի ճանաչել, ըստ սաղմոսողին\*:

Թվում է՝ ամեն ինչ ասված է, ուստի հարկ չկա նորանոր վկայությունների, բայց բանաստեղծն ինքն է շարունակում նոր գծեր ու զույներ ավելացնել՝ հաստատելու համար իր ասելիքը: Ըստ այդմ, այս նույն բանի Ե ենթագլխում հեղեղելով ինքնաբերութագրական նորանոր որակումներ՝ վերջին տողում ասարզ ու մեկին գրում է.

85 Եւ ես մահացայ կենացն եւ կենդանացայ կորստեանն:

Իսկ ի՞նչ է հասկանում հոգևորական բանաստեղծը ասելով՝ մահացա կյանքի համար և կենդանացա կորստյան համար: Պատասխանը միանշանակ է՝ զրկվել է հոգևոր պաշտոնից և դրանով իսկ՝ երկնային հավերժական կյանքի հնարավորությունից ու հավասարվել աշխարհականին, այսինքն՝ դատապարտվել է կորստյան:

Ի լրումն ասվածի՝ հարկ էմ համարում այս նույն գլխի վերջին ենթագլխից բերել ևս մեկ տող՝

Գողացան աստարք՝ չարին գումարք, զստացուածս սրտիս

իմաստից...

Ու որովհետև չարագումար օտարները գողացել են բանաստեղծի սրտի իմաստների ստա՛ս՝ ածքները, ուստի, ցավով շարունակում է բանաստեղծը, ոչ միայն չի հաւ՛ւլ իր ձգտածին, այլև զրկվել է ունեցածից.

Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ սաստկապէս,

Յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի,

Ի մեծագոյնն ամբառնալ՝ աստուստ գլորեցայ,

95 Յերկնային ուղւոյն՝ անդնդոց մատնեցայ,

Ի զգուշանալն առաւել՝ յաւէտ վնասեցայ,

Յանարատն պահիլ՝ մանր խորտակեցայ,

Կարծելով ընդ ահեակն մրցիլ՝ յաջն գթեցի,

\* Սաղմոսողն ասում է. «Ինձ պաշարեցին չարիքներ, որոնք անթիւ էին. անօրէնութիւններս ինձ վրայ հասան, եւ ես չկարողացա նկատել. գլխիս մագերից անելի շատ եղան դրանք, եւ սիրտս ինձ լքեց» (Սաղմ., ԼԹ, 13):

- Ի գերկորոզն խուզել՝ զնախնին կորուսի,  
 100 Ի խնդիր սակաւուն՝ ի կարեւորացն զրկեցայ,  
 Ի յուխտին պահել՝ դաշինն դրժեցի,  
 Առ սովորութեանն կտրիլ՝ կորուսիչս գտի,  
 Ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ,  
 Ջոր ես ինքն ինձէն ստեղծեալ՝  
 105 Չարաչար դատախազ անձին կարգեցի:

Սա ո՛չ միտիկա է և ո՛չ էլ վերացական ու անանձնական ճշմարտությունների ազդարարում, այլ ոչ հեռավոր անցյալում ծավալած սեփական գործունեության ու գործելակերպի հետևանքով ներկայում ունեցած անկյալ վիճակի խորապես ապրված, իրատեսական-բանաստեղծական վերլուծություն ու իմաստավորում: Այս նույնը Նարեկացին այլևայլ ձևերով բազմիցս փաստում է նաև Մատյանի ուրիշ գլուխներում: Հարկ չհամարելով մեկ առ մեկ վկայակոչել այդ ամենը, քանզի դա կարող է չափազանց մեծացնել հողվածիս ծավալը, այնուամենայնիվ ստիպված եմ անդրադառնալու մեկ այլ օրինակի ևս: Մատյանի ԽԸ գլխում բանաստեղծը նախ խնդրում է Տիրոջից արդարացնել ու կենդանացնել իրեն, իսկ այնուհետև, զուգահեռ անցկացնելով Սողոմոնի և իր միջև, ասում է, թե զարմանում ու ապշում է, որ եթե նա, յինելով այնքան բարձր ու փառաբանված, սայթաքեց ու կործանվեց, ապա ի՞նչ կարող է պատահել իր հետ:

- 5 Տաւնեա՛ զկեալս կորուսելոյս վերնականացն պարերգութեամբ,  
 Աւետարանեա՛ բանիդ արհնութեան զկենդանութիւն իմ  
մահացելոյս,  
 Զբարեբաստութիւն կամացդ յայտնեա՛, զովեալ, բոլորից գոյից  
եղելոց,  
 Ստացի՛ր անուն քեզ անճառ, եւ ինձ՝ թշուառիս՝ նորոգ փրկութիւն,  
 Կորուսցե՛ս զգիր մուրհակի մեղուցելոյս ամբաստանութեան...

-----  
 Հնարատրեա՛, գթութեանցդ Հայր, մեծ խոցուածոյս զարեղ  
սպեղանիս,

Կարեւոր կործանմանս՝ բարի այցելութիւնս,  
 Զի քո եմ, տէր ոգեսէր:

- 35 Այս Սողոմոնի յուսոյ աղերսանք իմոյս առեալ տիպ,  
 Քանզի ոչ այլ ոք բազմամեղ, որքան զնա ինձ զուգաշափող.  
 Երբեմն՝ որդի, ապա՛ ատելի,  
 Երբեմն՝ միջնորդ խաղաղութեան աստուծոյ ժողովրդեանն,  
 Եւ յետոյ՝ խտրոց որոշման բազում խոռվութեան,  
 40 Երբեմն՝ արէնք կենաց կացեալ,  
 Եւ յետոյ՝ մուրհակ մահու հաստատեալ...

- 65 Զարմանամ, վհատիմ՝ տարակուսեալ ապշութեամբ,  
 Զի թէ նա այնքան գթեաց, ինձ զի՞նչ պատահեցէ.  
 Զիա՞րդ անկաւ ամբարձեալն,  
 Զիա՞րդ սասանեցաւ հաստատեալն,  
 Զիա՞րդ կործանեցաւ կառուցեալն,  
 70 Ի՞բր ատարացաւ ծանուցեալն,  
 Զիա՞րդ զակատեցաւ զաւակն ընտրութեան,  
 Զիա՞րդ սրացաւ մերձաւորն,  
 Զիա՞րդ աղաւտացաւ փայլեցեալն,



- Զիա՞րոյ պատահեցաւ ազատեալն  
 75 Զիա՞րոյ անարիճեցաւ ուսուցիչն,  
 Զիա՞րոյ նուաղեցաւ հոշակեալն,  
 Զիա՞րոյ անարգեցաւ փառաւորն,  
 Զիա՞րոյ փոքրկացաւ մեծատունն,  
 Զիա՞րոյ ամբարշտեցաւ բարեպաշտն,  
 80 Զիա՞րոյ ամբարհաւաճեցաւ ընտրողն,  
 Զիա՞րոյ ունայնացաւ պատարունն,  
 Զիա՞րոյ կտրեաց զուխտն, որ ընդ բարձրելոյն:

Պարզ է, որ այս բոլոր հարցումները վերաբերում են ոչ թե Սողոմոնին, այլ հենց իրեն՝ բանաստեղծին: Այդ է վկայում ոչ միայն «Ինձ զի՞նչ պատահեցէ՞» հարցը, այլև «զիարոյ անարիճեցաւ ուսուցիչն» տողը: Չէ՞ որ, եթե Սողոմոնի ուսուցիչ լինելու կամ չլինելու մասին դժվար է որևէ պնդում անել, ապա ստույգ է, որ բանաստեղծը Նարեկա վանքում տարիներ շարունակ եղել է ուսուցիչ: Հիշե՞նք թեկուզ ՀԲ բանում հեղինակի ինքնաբնութագրական հետևյալ բառերը՝ «Պետ վարժից կոչեցեալ՝ յաճմինս դատախազ, ուսրբի ուսրբի անուանեցայ»:

ԽՆ զլիս ավարտին արդեն բանաստեղծը, իբրև գրական շատ նուրբ ու հետաքրքիր հնար, Սողոմոնի և իր համար Տիրոջից խնդրում է.

- Ձոր եւ ես մաղթեմ մեծ վստահութեամբ,  
 Նմանակից այսր հեծութեան,  
 215 Եւ զիմս ընդ նմին ընծայել գոչումն.  
 Զի թէ կորուցես զմեզ՝ դատեալ ըստ գործոց,  
 Ոչ պակասին փառք քո, զի իրաւամբք քո ճանաչիս,  
 Իսկ եթէ գոցես, այնքան բարձրանաս,  
 Որքան մեծութեանդ քում վայել է,  
 220 Քանզի յաւէտ արհնաբանելի ես դու երկրորդաւս՝  
 ողորմածութեամբ,  
 Քան նախահրաման սաստկութեամբն:  
 Դարձի՛ր, տէր, դարձի՛ր քաղցրութեամբ ի խնամս գթութեան՝  
 Զրի եւ ամենատառ պարգեւաբ սիրոյ մխիթարել յաւէտ  
 զտրտմեալքս  
 Համաշափղ տագնապաւ տապոյ տոչորման անթշկականի,  
 225 Զեռն եղեալ փրկութեան՝ նորոգեցէ՛ս վերստին՝  
 Քաւեալ եւ պատասպարեալ ի մեղսակործան խորտակմանէ:

Հասկանալի է, որ Սողոմոնի անունն այստեղ սուկ միջոց է բանաստեղծի «Ես»-ը թաքցնելու, քանզի Սողոմոնը վաղուց ներվել ու դասվել էր մարգարեների շարքը, ուստի՝ թե՛ փրկելու, թե՛ գտնելու և թե՛ վերստին նորոգելու մասին Տիրոջն ուղղված խնդրանքները, բնականաբար, վերաբերում են հենց իրեն՝ բանաստեղծին, որը փրկվել, գտնվել և վերստին նորոգվել կարող էր միայն ներվելու, տրված պատիժը վերացվելու և հոգևոր պաշտոնում վերականգնվելու դեպքում:

Այսպիսով, թեև ըստ էության լուծված կարող են համարել Գրիգոր Նարեկացու կյանքի մեծագույն առեղծվածը, բայց մնում է պարզել մեկ հարց ևս. իսկ ի՞նչ մեղադրանքներ են առաջադրվել նրան, կամ ի՞նչ հանցանքներ են վերագրել բանաստեղծին այդօրինակ ծանր ու ահավոր պատիժ տալու համար: Անշուշտ նոր չէ այս հարցը, այլ գալիս է խոր միջնադարից և այլևայլ տարբերակներով արծարծվել ու իրարամերժ պատասխաններ է ստացել սկսած միջնադարյան ավանդապատումներից, վերջացրած նոր և նորագույն շրջանի մեկնիչներով, նարեկացիագետներով ու թարգմանիչներով, սակայն, ցավոք, չի գտել

վերջնական լուծում: Պատճառը, իմ կարծիքով, այն է, որ գրեթե բոլորը հարցի պատասխանը որոնել են ոչ թե Մատյանում, այլ նրանից դուրս: Մինչդեռ պարզվում է, որ բանաստեղծը Մատյանում ծածկագրել է նաև իրեն առաջադրված մեղադրանքները:

Մատյանի ԽԵ բանում բանաստեղծը, դիմելով իր «կործանեալ» անձին, ասում է՝ սրտիդ մեջ արմատավորելով բարիքների հույսը, հավատքիդ գոտիով ամրապնդելով ցանկություններիդ աղբյուր երիկամների՝ Աստծուն խոստովանիր «գմտացո՛ իբրև զգործոց», այսինքն՝ հնարավորը, չկատարածը, մտածածը՝ որպես իրական, կատարած ու գործած: Ըստ այդմ, տեղում է այդօրինակ գործողությունների մի ամբողջ տարափ, բայց, նախքան դրան անցնելը, բանաստեղծը գրում է.

Բարդեա՛ եւ դիզեա՛ անձինդ մեղապարտի բամբասանս յոգունս՝  
Զքոյսն խոհերս բազմամասնեայս, անձն իմ, կշտամբեալ  
յոգնայթաանդ բանի...

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծը, դիմելով ինքն իրեն, պահանջում է իր մեղապարտ անձին բարդել ու դիզել բազում բամբասանքներ: Դրանից հետո նա հեղում է բամբասանքների մի ամբողջ շարան, որով և, իմ կարծիքով, հուշում է, թե իրականում իրեն ինչ մեղադրանքներ են առաջադրվել: Այլապես հազիվ թե բանաստեղծն իրեն թույլ տար իր մասին այդօրինակ ամփոփ բամբասանքներ հորինել, որովհետև Մատյանի Կ բանում նա ինքն իսկ դեռ գրելու է, որ «թե չար է անէծս առնուլ յաւտարէ, / ապա անձամբ զանձն անիծանել՝ կրկին չարաչար» (տ. 44-45): Այժմ բերենք (ԽԵ, Բ) բամբասանքների շարանը.

- Զչարութիւնն, զանարեւնութիւնն, զվրիպութիւնն,  
40 Զառ ի մարտին հանդիսէ փախուստ, զպարտութիւնն,  
Զմոլեգունութիւնն, զամբարշտութիւնն, զապշութիւնն,  
Զթմբրութիւնն, զքունն արթնական, զառ ի յընթացսն զնիրհումն,  
Զխորհուրդն ատարտտի, զբանիցն նանրութիւն,  
Զզագրութեանն հաճութիւն, զյամենալսն ի նմին,  
45 Զփափագելն աստուծոյ ատելեացն,  
Զաներկիղութիւնն, զանաստութիւնն, զանհարթութիւնն,  
Զթերութիւնն, զթիրութիւնն, զլուծութիւնն, զճշդութիւնն,  
Զանկապ արձակումն, զծիծաղականսն, զվրնջողականսն,  
Զկատակերգականսն, զգայթակղականսն, զպատրողականսն,  
50 Զանդէպ քաջութիւնսն, զանյարմար մարտսն, զառանց արինի  
արիութիւնսն,  
Զխեղդմունս հոգոյն, զսատանողականսն զերկշտութիւնս,  
Զբազմաստեղնեան ճիւղսն զրահետականս,  
Զանպատկառ փարաքմունսն, զգծտութիւնսն, զգծղմնութիւնսն,  
Զանդատ ատելութիւնսն, զմարմաջմունսն դիրըմբոնողականս,  
55 Զփոքունցն զանկշտութիւնս, զխոստմանցն դրժողութիւնս,  
Զուխտիցն մոռացութիւնս, զմմանեացն այլակերպութիւն,  
Զկեղծեացն քողարկութիւն, զփառամոլութեանն մորոտութիւն,  
Զյանիցն յաւակնութիւն, զապիրատութիւնսն, զինքնասիրութիւնսն,  
Զնախագահիցն տենչութիւն, զհատուցանելն եղեոնականացն,  
60 Զնոցինսն զանշահ աղճատանսն, զվայրապար բերմունսն,  
Զընթացակցութիւնսն խորամանկութեան բանսարկուին,  
Զբանին սերմնակաթութիւն, զվաճառումն կենացն ընդ գնոց  
սատակմանն,

**Զկորուստ աւանդիցն, զհայրենեացն ծախս, զկապարանն**

ձգողական,

Զփոկով լծոյ երնջոց անխզելի ըմբռնմամբ զանարեճութիւնս,  
65 Զյարաթաթաւ տղմաբնակութիւնս, զլքումն լաւացն,  
Զընթադրութիւնս անկարծիցն, զկնի դարձին առ նոյն դարձ  
դաժանական,

Զնորոգ մտացն, զաւտար խորհրդոցն, զանկայուն կամացն,  
Զհաշման հագագիւն, զէութիւն շնչոյն,  
Զեւսն քան զսահման կանոնացն դրութեան՝

70 Զիշխանականին զամենասփիռ բացարձակութիւն  
Եւ գոր չէ ճանելի եւ կամ գրելի եւ կամ պատմելի  
Եւ կամ յերեսս դիմաց բերելի:

Այս ամենը փաստորեն ոչ թե բանաստեղծն է իր մասին հորինում, այլ վերարտադրում է ուրիշների հորինածները, որոնցից եթե ոչ բոլորը, ապա որոշները հիմք են ծառայել նրան մեղադրելու և պատժելու համար: Այդ տեսակետից առանձնապես կարևոր են ընդգծված տեղիները, իսկ ամենից ուշագրավն, անշուշտ, «Զնախագահիցն տենչութիւն» արտահայտությունն է, որը հավասարազոր է կաթողիկոսության ձգտման: Ի դեպ՝ նույն արտահայտության բազմաթիվ հոմանիշներ կարող ենք բերել Մատյանի այլ գլուխներից: Օրինակ, բանաստեղծը գրում է. «Հոգւոյ իշխանին մոլութեան հնագանդեալ՝ թողի գտելի քո նորս» (ԺԹ, տ. 83-84), «Տարածեցայ առաւել իբր վեհ» (Ի, տ. 59), «Փառացն վայելչութիւն ստուերացաւ, / հանճարն առաջնորդական խափանեցաւ» (ԻԴ, տ. 47-48): Իսկ նման ձգտում Նարեկացին կարող էր դրսևորած լինել անտարակոյս Խաչիկ Ա կաթողիկոսի մահվանից հետո: Ծիշտ է, 992 թ. կայացած կաթողիկոսական ընտրություններից հետո անցել էր հինգ տարի, բայց, ինչպես տեսնում ենք, նման ձգտումը բանաստեղծին չի ներվել, այլ ներկայացվել է որպես մեղադրանք: Բնականաբար, 992-997 թթ. պարտվածի ու հաղթողի հակասությունն այնքան է սրվել, որ բանը հասել է պատժամիջոցներ կիրառելուն, որը, հարկավ, առանց քիչ թե շատ լուրջ հիմքի չէր կարող իրագործվել: Հակոբ Օշականը, նկատի ունենալով 19-րդ դարի նույնաման մեկ այլ իրողություն, ասում է, որ «ահաւոր են եկեղեցականները երբ առիթ ունին իրենց մէկ կարգակիցէն վրէժ լուծելու մարդոց միջինը անցնող անգթութեան մը փաստերով»<sup>16</sup>: Իսկ հնարավոր է պատկերացնել այդ անգթության չափն ու աստիճանը 10-րդ դարի մայրամուտին: Հագիվ թե...

Մի կողմ թողնելով բանաստեղծի թվարկած բոլոր բամբասանք-մեղադրանքների վերլուծությունն ու գնահատությունը՝ ասեմ միայն, որ դրանցում կարող ենք գտնել ավանդաբար Նարեկացուն վերագրված կամ ենթադրված մեղադրանքների, բոլոր տարբերակները: Իսկապես ճիշտ է ասված, որ առանց կրակի ծուխ չի լինում...

Դատեք ինքներդ. բանաստեղծի թվարկած բամբասանքներից են «զխորհորդն աստարտի», «զփափազելն աստուծոյ ատելեացն», «զընթացակցութիւնսն խորամակութեան բանսարկուին», «զկորուստ աւանդիցն, զհայրենեացն ծախս», «զաւտար խորհրդոցն», «զիշխանականին զամենասփիռ բացարձակութիւն» և այլն: «Զնախագահիցն տենչութիւն» արտահայտության մասին վերը արդեն խոսվել է: Ներկա դեպքում, իմ կարծիքով, չափազանց հետաքրքրական են նաև «զվաճառումն կենացն ընդ գնոց սատակմանն» և «զհաշման հագագին» բամբասանք-մեղադրանքները: Դրանցից առաջինով փաստորեն Նարեկացուն

<sup>16</sup> Յ. Օշական, Աշվ. աշխ., էջ 337:

մեղադրել են հոգևորականի վարքագծից շեղվելու և աշխարհիկ հետաքրքրություններ դրսևորելու մեջ: Իսկ «գհաշման հագագին, գեութիւն շնչոյն» բամբասանքներով մեղադրել են մայրենի լեզվի ավանդական ըմբռնումները և կանոնները խախտելու, նոր կամ օտարոտի հակումներ ցուցաբերելու մեջ: Հայտնի է, որ հար և նման մեղադրանք ժամանակին տրվել էր նաև Նարեկացու հորը: Այդ է հաստատում Խոսրով Անձևացուն բանադրած Անանիա Ա Մոկացու մեծարժեք թուղթը, որտեղ Խոսրով Անձևացու դրսևորած տարօրինակությունների ու գործած մեղքերի շարքում առաջինը Աշվում է այն, որ «սկսաւ նախ զբարբառն գելակի արձակել՝ ըստ յունարէն լեզուոյն զկիրակէն կիտիակէ կոչել և զԵրուսաղէմ՝ Երուսաղէմ, և որ սոցին նման է, ի սոյն յառեալ բարբառ»<sup>19</sup> (ընդգծ. հրատ. է - Հ. Մ.):

Սեփական մեղադրանքների նարեկացիական թվարկման ամենահետաքրքիր կողմերից մեկն էլ այն է, որ Աշելով ավելի քան յոթանասուն բամբասանք-մեղադրանք՝ բանաստեղծը վերջում հարկ է համարել ավելացնել նաև, որ կան և այնպիսիք, որոնք «...չէ ճառելի եւ կամ գրելի եւ կամ պատմելի / եւ կամ յերսս դիմաց բերելի»:

Որ բանաստեղծի իր անձին բարդած ու դիզած բամբասանքները ծնունդ են ոչ թե բանաստեղծական վառ երևակայության, այլ բանաստեղծի իրական թշնամիների, հակառակորդների ու նրանց արբանյակների չարահնար մտքի, որին մարդկային նույնիսկ ամենաբարձր առաքինությունները («զաներկիւղութիւնն, զանասատութիւնն, զանհարթութիւնն», «զճշդութիւնն», «զառանց արիւնի արիութիւնն», «զհնքնասիրութիւնն», «զհատուցանելն եղեռնականացն», «զնորոգ մտացն» և այլն) կարող են թվալ մեղք ու հանցանք: Այս նույն գլխի հաշորդ ենթագլխում բանաստեղծը գրում է.

Եւ արդ, զիա՞րդ բժշկեսցիս, անձն իմ եղկելի,

Ի յայսքանեաց տիգաց խոցոտեալ,

75 Բարձեալ թողեալ այր մի տարագիր, անողջանալի, ըստ

մարգարէին,

Քանզի մի ի վերագրելոցդ բաւականապէս զարէ սատակման,

Թող թէ այսքան դասք սպանողաց, դժնէից դահնաց շուրջ

պաշարողաց,

Մանաւանդ զի ոչ այսու եւեթ նմանագրութեամբ

Կշոի տարացոյց տաժանեցելոյս:

80 Այլ գոր արիճակ անթիւ բազմութիւն կայտառաց կարճաց

խայթողականաց՝

Ի ստորին մասունս ծայրից տոնոցն զարհասական թոյնս բերելոց,

Եւ յաման մաշկեղէն արկեալ ամփոփէ զելիցն շաւիղ կապարանին

շրջափակութեամբ,

Ցուցանի արտաքուստ բարուք, իսկ ի ներքուստ՝ համբարք չարի

Եւ պահեստ կորստեան եւ կոյտ կսկծման

85 Եւ գործունեայք սատակման եւ մշակք մահու:

Ավելի որոշակի ու մեկին բացատրություն, քան ասվածն է, հագիվ թե հնարավոր էր տալ՝ հաշվի առնելով բանաստեղծի իրական կացությունն ու Մատյանի միջոցով ներման արժանանալու ակնկալիքները: Նախ՝ բանաստեղծն այդ բոլոր բամբասանքներն անվանում է խոցոտող տեգեր, իսկ իրեն բնութագրում

<sup>19</sup> Գալուստ Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխատասիրությամբ պրոֆ. Պ. Հ. Հակոբյանի, Ս. Էջմիածին, 1993, էջ 126:

որպես «բարձեալ թողեալ այդ մի տարագիր»: Երկրորդ՝ ասում է, որ վերջ թվարկածներից մեկն անգամ բավական է մարդու սպանելու համար, էլ ուր մնացին սպանողների այսքան դասերը: Երրորդ՝ այդ ամենը ոչ թե լոկ անցյալ են, այլ ներկա և բանաստեղծն իրեն զգում է դժնի դահիճներով շրջապատված: Չորրորդ՝ այդ բոլորը որակում է որպես «մանագրություն», այսինքն՝ ոչ թե ինքն է հորինել, այլ գրել է ուրիշների ասածներին հար և մման: Հատկանշական է, որ հայկազյան լեզվի նոր բառգրքում «մանագրություն» բառը բացատրված է «զծագրություն մանությունն. նկարագրություն» ձևով և վկայված է միայն Նարեկացու այս օրինակով: Հինգերորդ՝ Նարեկացին այդ ամենը կոչում է «տարացոյց տաժանեցելոյս»: Իսկ տարացոյց մշանակում է. «Բաց է ի բաց ցոյց՝ իբր յայտնի կամ հեռաւոր. յարացոյց. ցուցակութիւն օրինակ. տիպար. մմանութիւն. առակ. մշանակ. յայտարար»<sup>20</sup>: Վեցերորդ՝ բանաստեղծը Մատյանը գրելիս իր վիճակը բնութագրում է որպես տարագրի կացություն: Իսկ հայկազյան լեզվի նոր բառգրքում «տարագիր» բառը բացատրվում է. «Գրով դատակնքոյ վտարեալ ի տար աշխարհ. ի բաց վարեալ. արտասահմանեալ. արտաքսեալ. օտարացեալ. օտար. վտարանդի. զրկեալ յօրդիութենէ»<sup>21</sup>: Եթե նկատի ունենանք, որ Նարեկացու ըմբռնմամբ հոգևորականն ապրում է երկնային կյանքով ու երկնային հավերժական կյանքի համար, մինչդեռ աշխարհիկ մարդը՝ երկրային կյանքով և եմբակա է մահվան, ապա կարող ենք ասել, որ դրանք փաստորեն դիտվում էին տարբեր աշխարհներ, ուստի հոգևոր պաշտոնից զրկվողին նույնքան է վերաբերում «տարագիր» բառի «գրով դատակնքոյ վտարեալ ի տար աշխարհ» բացատրությունը, որքան որևէ երկրից այլ երկիր վտարվող անձին: Վերջապես, անկարևոր չէ և այն փաստը, որ եթե, ինչպես տեսանք, իրեն տրված մեղադրանքները բանաստեղծը ներկայացրել է Մատյանի խե բանում, ապա խՋ-ում ծածկագրել է իր ծննդյան և կուսակրոն քահանա ձեռնադրվելու թվականը<sup>22</sup>:

Հարկավ, դեռ երկար կարող են շարունակել այսօրինակ փաստարկները, բայց, կարծում են, բերվածները լիովին բավարար են ապացուցելու հիմնադրույթիս ճշմարտացիությունը, շնորհիվ որի բանաստեղծը մեզ ներկայանում է միանգամայն նոր, ավելի իրական, երկրային, մարդկային ու բնական նկարագրով: Ըստ այդմ, եթե մինչև այժմ «Նարեկացու ծովածավալ ու ծովատրոփ»<sup>23</sup> Մատյանը, բանաստեղծի իրավացի կարծիքով, «ոչ այնքան հասկացվել, որքան զգացվել, ոչ այնքան գնահատվել, որքան պաշտվել»<sup>24</sup> է, ապա այսուհետև զգացվելուց բացի նաև հասկացվում է, իսկ պաշտամունքը դառնում է արդյունք զգացման, հասկացման ու գնահատման: Ավելին, հեշտությամբ լուծվում են նաև Մատյանի կառուցվածքին, հատկապես ՂԲ և ՂԳ գլուխներին վերաբերող տարակուսանքները, որոնց կանդորադառնանք մեկ այլ հողվածով:

**Г. К. МИРЗОЯН - Парадокс Нарекаци.** - Со времени написания «Книги скорби» прошло уже целое тысячелетие, и о гениальной поэме Григора Нарекаци создана внушительная литература. Тем не менее, однако, выясняется, что и поныне многие факты жизни и деятельности поэта, неразрывно связанные с его творчеством, остаются малоизученными, непонятыми и непроясненными. Между тем тщательное исследование «Книги» приводит к убеждению, что изощренное

<sup>20</sup> «Նոր բառգիրք հայկական լեզուի», Բ. Բ, Եր., 1981, էջ 855:

<sup>21</sup> Նույն տեղում էջ 851:

<sup>22</sup> Այդ մասին տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, *Ազվ. աշխ.*:

<sup>23</sup> Պարյուր Սևակ, *Երկերի ժողովածու*, 6 հատորով, Բ. 5, Եր., 1974, էջ 248:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 247:

языковое и мыслительное мастерство Нарекаци позволило ему зашифровать в поэтическом тексте бесценные автобиографические сведения, раскрытие которых проливает свет на многие считавшиеся доселе неизвестными страницы жизненного и идейно-нравственного пути, и что, пожалуй, самое главное, на истинные побудительные мотивы и цели создания вершинного произведения Нарекаци — его «Книги скорби».

Сопоставительный анализ разных частей поэмы, а также привлечение исторических фактов делает для автора статьи совершенно очевидной нижеследующую хронологическую и психологическую картину. В 980-992 гг. Нарекаци разнонаправленно и плодотворно занимался литературной, церковной и общественной деятельностью. На исходе этого срока, в 992-м, он сделал неудачную попытку стать католиком, и на следующем этапе между ним и вновь избранным католиком всех армян Саркисом А Севанеци сложились противоречивые, тяжелые отношения, которые со временем настолько обострились, что в 997 году завершились для Нарекаци лишением духовного сана. Несмотря ни на что, удар был неожиданным и настолько жестоким, что обрек Нарекаци на творческую немощь и поставил его на грань душевного расстройтва. Пережив глубокий кризис, поэт смог, однако, найти в себе силы и создать полную искреннего раскаяния «Книгу скорби», которая была своеобразным осознанием свершившегося с ним, благодаря которой он заслужил прощение и возвращение сана.

По справедливому мнению Паруйра Севака, книгу Нарекаци «не столько понимали, сколько чувствовали, не столько оценивали, сколько чтители». Автор статьи находит, что теперь, когда проясняются столь важные факты, связанные с ее созданием, веками освященное почтение к поэме Нарекаци естественно дополнится и пониманием, и оценкой. В частности, с легкостью разрешатся существующие в нарекациеведении недоумения относительно построения книги, а именно, о месте 92-й и 93-й глав, к чему автор обещает обратиться впоследствии.